ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ՓԱՐԻԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Այս օրերս Փարիզում կազմուել է «Փարիզի Հայկական միութիւն» անունով մի ընկերութիւն, որի տպագրուած կանոնադրութեան մի օրինակ ուղարկուած է մեզ։

«Միութեան» ծրագիրն ու նպատակը խիստ ժամանակակից կարևորութիւն ունին և բաւական մօտ են այն «Հայկազեան քաղաքակրթական միութեան» ծրագրին, որ անցեալները կազմուեց Թիֆլիսում։

Միութեան նպատակն է՝ նպաստել, օրինական միջոցներոր, հայ ազգի բարոյական և նիւթական շահերու պաշտպանման։ Ճանչցնել քաղաքակիրթ աշխարհին՝ Հայութեան անցեալ ու ներկայ կեանքը և մտաւոր գործունէութիւնը։ Տարածել հայ ժողովրդի մէջ արևմտեան քաղաքակրթութիւն։

Այդ նպատակին հասնելու համար «Միութիւնը գործ է դնում հետևեալ միջոցները.

Օգնում է տաղանդ ցոյց տուող հայ ուսանողներին։

Նպաստում է հայ թատրոնի զարգացման։

Օգնում է հայերէն լեզուով գրական, գիտական, պատմական, գեղարուեստական ինքնագիր և թարգմանական գործերի, ինչպէս և օտար լեզուով Հայութիւնը Եւրոպային ճանաչեցնել ձգտող աշխատութեանց հրատարակման։

Կազմակերպում է Փարիզի և Եւրոպական ուրիշ քաղաքների մէջ երեկոյթներ, հանդէսներ և դասախօսութիւններ հայ երաժշտութիւնը, գրականութիւնը և ընդհանրապէս հայ արուեստը և Հայոց անցեալ ու ներկայ պատմութիւնը ճանաչեցնելու համար Եւրոպական հրատարակութեանց։—Հրատարակում է գրքեր նոյն նպատակով։

Ջանում է մասնակցել իր ներկայացուցիչների միջոցով՝ գրական, գիտական և այլ միջազգային համաժողովների։

Ազգային մեծ աղէտների և դժբաղդութեանց ժամանակ

նիւթական և բարոյական օգնութիւն պիտի ջանայ հասցնել հայ արկածեալներին։

Հիմնում է Փարիզի մէջ հայկական մի թանգարան ու հայկական մեծ մատենադարան, ուր պիտի հաւաքուին հայերէն լեզուով երևացող բոլոր լրագիրներ, գրքեր, հին ձեռագրեր, և օտար լեզուներով Հայոց մասին լոյս տեսած բոլոր հրատարակութիւններ։

Աշխատում է հիմնել Փարիզի մէջ գիշերօթիկ միջնակարգ Կոլէժ-վարժապետանոց։

Հիմնում է «Համազգային ֆոնդ» (fonds), որ պիտի պահուի ևրոպական մի մեծ դրամատան մէջ ըստ որոշման ընդհ. ժողովին։

«Միութիւնը կազմակերպւում է այսպէս».—

Անդամակցում է ամեն հայ ու հայուհի։ Տարեկան անդամավճարն է 10 ֆրանկ (3.75 կ). «Մշտական» անդամ լինել ցանկացողը վճարում է միանուագ 250 ֆր. «բարերար անդամը» վճարում է 2500 ֆր.։ «Պատուի անդամ» կոչւում են հայ օտարազգիք, որոնք կարևոր աջակցութիւն են նուիրում ընկ. նիւթական ու բարոյական բարգաւաճման։

Նուէր ընդունում է՝ թէ գումարով և թէ հին ձեռագրեր գեղարուեստ. իրեր, հին դրամներ և այլն և այլն։

Տնօրէն խորհուրդը, որ վարում է ընկ. գործեր, բաղկանում է 7 անդամից, Ատենապետ, փոխ-Ատենապետ, Ատենադպիր, գանձապահ և երեք խորհրդական անդամ։

Առաջին տնօրէն խորհուրդը հիմնադիր ընդհ. ժողովից ընտրուած է հետևեալ կերպով.—պ. պ. Ներսէս խան Ներսէսեան, ատենապետ. Շիրվանզադէ, փոխ-ատենապետ, Համբարձում Մելիքեան, Գանձապահ, Ա. Զօպանեան, ատենադպիր, բժշկապետ Աւետիք Բաբայեան, Յ. Իսկենդեր և Մ. Յովակիմեան։

«Միութիւնը» ունի իւր ընդ. ժողովը, ծժանդակ մասնախմբեր ուրիշ հայաբնակ քաղաքների մէջ։

Կ. Պոլսից մեզ գրում են.

«... Ամենէն ցաւալին, վտանգալին ու ահռելին մեր ներքին խռովութիւններն ու երկպառակութիւններն են, որ կործանարար են մեր ազգային գոյութեան։ Զարաբաստիկ վիճակ. Հայ տղայք, Հայ աշակերտք Հայ վարժարանաց կապես-